**Արձանագրություն N 2**

***«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/52» ծածկագրով Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնահատող հանձնաժողովի նիստի***

ք. Երևան 02.11.2017թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավալյան
Հ. Մուշեղյան
Հ. Խեչումյան
Գ. Ջաքարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան

**1. *Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու* ընթացակարգի հայտերի բացման մասին**

(Հ. Մարտիրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ.

1.1 «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/52» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը կատարվել է <<armeps.am>> համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում: Համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | |
|---|---|---|
| 1 | «Աննա Աղաջանյան Հայրապետի » ԱՁ | Ք. Երևան, Գալշոյան 26, բն.25, էլ.փոստի հասցեն է՝annaagadjanyan@mail.ru ՀՎՀՀ 86998548 , հհ 2470103477290000 |
| 2 | «Արման Ասմանգուլյան» ԱՁ | Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն էլ.փոստի հասցեն է՝armana6@mail.ru ՀՎՀՀ 30923517, հհ 2474600042830000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2 Մասնակից «Աննա Աղաջանյան Հայրապետի» ԱՁ-ի <<armeps.am>> էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան բացառությամբ հայտի ապահովումը՝ միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, ներկայացված չէ հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան, մասնավորապես՝ հայտի ապահովմանը կից ներկայացված չէ վճարման պահանջագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.3 Մասնակից «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ի <<armeps.am>> էլեկտրոնային համակարգ մուտքագրած հայտում հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը առկա են և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 Մասնակիցներ «Արման Ասմանգուլյան» և «Աննա Աղաջանյան Հայրապետի» ԱՁ-ների գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.5 Մասնակիցներ «Արման Ասմանգուլյան» և «Աննա Աղաջանյան Հայրապետի» ԱՁ-ների կողմից ներկայացրած գնային առաջարկները հետևյալն են՝

| Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Գինը առանց ԱԱՀ |
|---|---|---|
| 1 | «Արման Ասմանգուլյան» ԱՁ | 1 700 000 |
| 2 | «Արման Ասմանգուլյան» ԱՁ | 70 000 |
| 3 | «Արման Ասմանգուլյան» ԱՁ | 850 000 |
| 3 | «Աննա Աղաջանյան Հայրապետի» ԱՁ | 200 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.6 Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.7 Հանձնաժողովը որոշեց «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.8 Հանձնաժողովը որոշեց մերժել և անբավարար գնահատել «Աննա Աղաջանյան Հայրապետի» ԱՁ-ի կողմից ներկայցված հայտը Գնումների գործընթացի կազմակերպման կարգի N 526-Ն որոշման 40-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.9 Քանի որ ընթացակարգի 1, 2 և 3-րդ չափաբաժինների մասով «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գները ,ուստի հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատումը և օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային ծանուցմամբ մասնակցին հրավիրել

գների նվազեցման շուրջ բանակցությունների,որը տեղի կունենա 06.11.2017թ.-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

**2. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու գնման ընթացակարգի բարձր գնային առաջարկների շուրջ բանակցությունների անցկացման մասին**

**(Հ. Մարտիրոսյան)**

Ընդունել ի գիտություն, որ.

2.1. «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ն 06.11.2017թ.-ին ժամը 11:00-ին <<armeps.am>> էլեկտրոնային կայքով ծանուցմամբ հրավիրված էր մասնակցելու «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/52» ծածկագրով ընթացակարգի 1, 2 և 3-րդ չափաբաժինների մասով բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների:

2.2. Մասնակից «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ն չէր ներկայացել «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/52» ծածկագրով ընթացակարգի բարձր գնային առաջարկների նվազեցման շուրջ բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

2.3. Հանձնաժողովը որոշեց.

«ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-17/52» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների»մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ -0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | Հ. Մարտիրոսյան | |
| Անդամներ՝ | Ա. Ավալյան | |
| | Հ.Մուշեղյան | |
| | Հ. Խեչումյան | |
| | Գ. Զաքարյան | |

Հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Ասատրյան